


Անբաս Բիւրաս
սմբարուքիւն «ՓԻԻՆԻԿ» Ի
Ալեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ
ՂրԸ°
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆ Ը
ԿԱՆՆԻՎ Է
Ձեռագիր ետ չ'դարձուի

ՓԻԻՆԻԿ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Ֆր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8
ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ Բայլ. 6
Ազդեր կ'ընդունուին մասնաւոր պայմաններով

ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ԼԻՆԳՄԱԲՅԻ, ԿԻՐԱԿԻ առաւօտները

ՄԱԿԵԴՈՆԻԱՆ

Պաշրաններուն հրդեհը հետզհետէ կը ծաւալի. բռնկած լեռներուն ստորտակն կը լսուին աղեխաշ ազադակները յուսահատութեան պատերազմը կուսող ցեղի մը. այդ ցեղը խոնջած կը թուի ա՛լ կրելէ լուծը գերութեան, ապրելէ ստրուկի անարգ կեանքը, ու այդ աղնիւ ցե՛ղն է որ հիմայ վճռած է թօթուել իր ծանր լուծը:

Գուորը զորդեցաւ. թուրքը յիշեց իր հին օրերը. նորէն սրելով սրեց այն սուրը, որուն վրայ չորցած է հայ արիւնը, Մեծ Զարդի Մարտիրոսներուն արիւնը. հիմայ պիտի փորձէ նորէն թափել մակեդոնացիներուն արիւնէն, որ զինը պիտի ըլլայ վաղուան ազատութեանը:

Եւրոպան, շահերու դարամերժ մասհոգութեամբը տանջուող այդ պատուը, կը զիտակէ հեռուէն, կը սարսուռայ, ջլատիլի ցընցումներով, կը զառանցէ ու, իր գերազայն մենագարութեանը մէջ կը խնդայ, ջլատի-

տաւոր բրբեջը, ինք, Եւրոպան, թուրքէն ու պուլիարէն աւելի ու կը զգայ վաղուան արհաւիրքները:

Եւ սակայն Պաշրանները բռնկած են, բոցը քիչ ատեան կը բռնէ բոլորափքը, պիտի լավէ կեանքեր, մահ ու մոխիր սրփոնելով շուրջանակի:

Արիւնը կը վաղէ հեղեղի պէս, ազատագրութիւնը ձեռք բերելու համար իր դոյութիւնը վստանող ցեղի մը արիւնն է որ կ'երթայ կը խառնուի զեռ նոր հալող ձիւնէն կազմուած առուակներուն հետ. այդ արիւնէն կը ծծէ գետինը, վազը զարնանափերջի ծաղիկները բոլորն ալ արիւն պիտի հոտին. քրիստոնէին ու մահմետականին իրարու խառնուած արիւնը, որ կը թափի այս պահուս, Վարտարի հովիտներուն մէջ:

Մակեդոնիան ուրեմն երկունքի մէջ է, ազատագրութեան երկունքին մէջ. Յաւն կազապէ, գերութեան շրջանաւարտ ազգերը, երկուան բազդակիցները, տարաբազդիկ Մակեդոնիային, կամ այսօրուան բազդաւորները. Սերպը, Յոյնը՝ Յաւը կը ծաղրեն անոր. ցաւին ցաւակից մը կայ, մէկ ցաւակից միայն, Պուլիարիան է անի:

Դահլիճները զո՛ւր կը բանակցին ծածուկ
Հեռագիրներով. յեղափոխներուն աչքերը
կարծրած են, դիւանագիտական խրատնե-
րուն մտիկ ընող չի կայ հիմայ, գլուխները
փոթորկած են. ա՛յնքան հանգիստուր խօս-
տունները Թուրքին, ա՛յնքան փառաշուք ստու-
րագրութիւնները պաշտօնական Եւրոպային,
ա՛յնքան դաշնագիրները, պատերազմներէն
վերջը կնքուած ու վաւերական. այս ամենը
մեռած տառ մնացած է:

Թուրքիան խարեց.

Եւրոպա՛ն ալ խարեց:

Մակեդոնիան ա՛լ խարուիլ չ՛ուզեր. անի
երդում ըրաւ վերջ գնելու կացութեանը,
ըլլա՛յ քանի մը տասնեակ կամ հարիւրաւոր
հազարներու թափուած արիւնին գնովը, եր-
դում ըրաւ, պիտի կատարէ:

Ուսանող, ուսուցիչ, քահանայ, վարդա-
պետ, վաճառական, արհեստաւոր, բազուկ
ու միտք, անիրաւ ու բաբրարոս ռեժիմին
տակ ճնշուող բոլոր ուժերը պայթեցան հի-
մայ, ահռելի պայթումը:

Երէկ ազգարարութիւն մ'եղաւ.

Այսօր վերջնագիր մը կը զոհուի կոր.

Վաղը պատերա՛զմը:

Ուրեմն եզիրական վազորդայնի մը նա-
խընթաց օրը հատանք:

Թուրքիան ու Պուլիսիան պիտի չա-
փուին, Տիւսոնն ու Թզուկը. բայց այդ տի-
տոնին ու այդ թզուկին ետին ս՛րտնք պա-
հուրտած են:

Վազուան արեգակը պիտի շուտաւորէ ան,
շուշտ այս մութը, բայլը պիտի ցնդի:

Բայց, այդ մութէն դուրս, ամենը պայ-
ծառ է: Պատերազմին յայտարարութիւնը՝ շա-
բաթուան խնդիր է:

ԱԶԳԱՅԻՆ

Զարդի շշուկներ. — Անցածները լու-
սեցան թէ վանայ մէջ Թուրքիոնն է Հն-
յեբուն միջև արիւնոտ ընդհարում մը տեղի
ունեցած է երկու կողմէն հարուստներով:
Այս լուրը, եւրոպական կարեւոր թերթե-
րուն մէջ հրատարակուած, գեռ մինչեւ ցարդ
հերքուած չ'է, և ո՛չ ալ երկրորդ անգամ
հաստատուած:

Իսկ այս շաբաթուան թղթաբերով հասած
Փրանսական Թուլն լրագրին վերջին թիւին
մէջ հրատարակուած պոլսական հեռագիր մը
Տիգրանակերտի մէջ նոր ջարդի մը նախա-
պատրաստութիւնը կ'ազդարարէ: Ելլալով
մասնաւոր հրահանգներ զրկուած են այն
կողմերու Քուրտներուն՝ պատրաստ գտնուելու
առաջին նշանին Հայերուն վրայ խուժելու և
զանոնք ջարդելու համար: Նոյն հեռագիրը
կ'աւելցնէ թէ՛ Կ. Պոլսոյ անգլիական դես-
պանատունն անմիջապէս իր մէջէն կարեւոր
անդամ մը ճամբայ հաներ է դէպ ի Տիգ-
րանակերտ, իրրեւ ներկայացուցիչ ու հիւ-
պատոս:

Տիգրանակերտի մէջ վախ կը տիրէ թէ
Քուրտերը ջարդ մը տան Հայերուն, իսկ
հո՞ս...:

— Իրական ջարդ մը տեղի ունեցեր է,
լսեցինք, բարեբազդաբար մարդու կարուստ
չը կայ:

Պարզենք քանի մը բառով.

Տիգրանակերտցի Տէր Սահակ Մինասեան
քահանան, սր անցածները հրաժարած էր,
որուն նկատմամբ շատ մը զգուելի ու գայ-
թակղեցուցիչ շուկներ շրջեցան քաղքին մէջ,
երբ գեռ հոս հիւր կը գտնուէր մեր ալե-
զարդ եպիսկոպոսը, այս շաբաթուան մէջ,
տարօրինակ հրաժեշտի ողջոյններով մեկնած
է շրջափակէն Ս. Պօղոս Պետրոսի, ուր
զատական օրերուն մէջ պատարագած էր
նոյն ինքն Տէր Սահակ: Բարեշնորհք, հինգ
տարի տեւող իր քահանայազարծութեան յի-
շատակը յուերժացնելու խիստ բնական դի-
տումով, բաժնուելէ առաջ ազգային յարկէն
ուր սարիներով բնական է առանց փող
մը վճարելու ազգ. սնամուկին. վերջին պա-
հուն, հրաժեշտի ողջոյններուն հետ ռիւս-
սէւաթիֆ ջարդ մը տուած է տարիներով
իր զործածած կահ կարասիներուն. աթոռ-
ներ, բազմոց, նստարան, մահճակալ, լու-
սամուս, ապակի, խողովակ, ևն. ջարդ ու
փշուր բրած ու այնպէս մեկնած է: Ու ըսել
թէ՛ այս բոլորը կը պատկանի Ազգինս
Ապրի՛ Խնամակալութիւնը:

Մհա՛ւասիի բարբարոս Քուրտերուն նախ-
ճիրները նոնմացնող ու հիացուածին խը-
լող իրենց հայրենակից քահանայի մը
փա՛ռքը...: Գեր. Տ. Յովսէփ Կպիսկո՞-
պոս Այվազեան թո՛ղ յանձնարարէ գեռ
ու վիայականներով զինէ այս խաչա...կիր-
ները:

Չերաւնի Բարեսիրացը կը շուտաւրէ պայտը ճիշդ ժամը երկուքուկէսին իր Ընդհ. Ժողովը, ուր պիտի վաւերացուի ընկերութեան կանոնագիրը: Ուրախ ենք հաստատելու թէ արձանագրուող անդամներուն մեծագոյն մասը վճարած են Մարտի ամսականները, և պիտի փութան ներկայ գտնուիլ սոյն Ընդհ. Ժողովին: Կը կրկնենք, այսօրուան ընդհ. Ժողովը մեծ կարեւորութիւն ունի Բարեսիրաց ընկերութեան անդամներուն համար մանաւանդ, որովհետեւ այլ ժողովին մէջ ամեն անգամ իրաւունք ունի բարձրաձայն յայտարարելու իր կարծիքը, կանոնագրին ո և է մէկ յօդուածին վրայ, կանոնագիրը վաւերացուելէ առաջ:

Ո՛վ որ անկեղծօրէն կը փափաքի Բարեսիրաց»ի յարատեւութիւնն ու անոր բարձր նպատակին իրագործումը, թո՛ւ ներկայ գտնուի այս օրուան ընդհ. Ժողովի նիստին, որուն վայրը նշանակուած է արդէն իրաքանչիւր անգամի ուղղակի հրաւիրագրին մէջ:

Գաւիթի պատուական ազգայիններէն Տիար Կարապետ Միհանօֆ. երկուսն ուսականով մեկնեցաւ Կ. Պոլիս, ուր տասն և հինգ օրուան շափ մնալէ ետեւ, պիտի մեկնի Կովկաս և պիտի այցելէ Էջմիածին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սէրեզի մէջ յեղափոխներու և թուրք զինուորներու մէջ ընդհարում մը տեղի ունեցեր, հինգ թուրք զինուոր սպանուեր են:

— Մայիս մէկին երեք հարիւր պուլխարներէ աւելի ձեռակալուեցան ու բոլոր պուլխարական հաստատութիւնները փակուեցան: Չինուած թուրքերու և զօրքերու խումբերը քաղքին մէջէն կ'անցնին, արիւնահեղ կծիւներէ կը վախցուի:

Մերանիկի երկաթուղիի զծին վրայ, կայարանէն երեք հարիւր մէթը հեռի, տասնըհինգ ուսուր արձակուեցան, կէսօրուան ետքի կառախումբը մեկնելու պահուն: Մէկ հատը միայն պայթեցաւ. միւսները ձաճբուն վրայ գտնուեցան անվթար: Ռումբեր արձակուեցան Հեռագրատան վրայ ալ, որ մեծ վնասներ կրեց. երեք պաշտօնեաներ ըսպանուեցան: Կը հաստատուի թէ այս շարժումը լոկ Սեդիկի մէջ տեղափակուած չէ: Ներսի քաղտըներն ալ շատ մը ուսուրք ար-

ձակուեր է եղեր: Կը կարճուի թէ այս ամէնը նշանն է Մակեդոնիոյ մէջ պուլխարական ընդհանուր ապստամբութեան:

— Օսմ. Գրամատան միջադէպքին, երկու Ֆրանսացի և երկու Գերմանացիներ պահանուեցան, գերմանական փոխ հիւպատոսը վերաւորուեցաւ: Այս արհաւիրքները սփռողներուն մէջ կը գտնուէին, կ'ըսուի, պուլխարական Լիկէօնի բարձրագոյն կարգէն շատ մ'ուսանողներ, ուսուցիչներ ու քահանաներ: Ամենքը ձեռքերնին ուսմբերով լեցուն պարկեր բռնած էին, զիրենք հետապնդող թուրք զօրքերուն վրայ կը նետէին:

Գերմանական զիւպը տինամիթով քանդուեցաւ:

— Դուռը կը ճգնի համոզել ղեկավարները թէ՛ Հիւլի բաշայէն, Իւլէմաներու յանձնատողովէն ու Էօմէր բաշայէն հասած լուրերը յոյս կուտան որ Ալբանացիները պիտի ալ չ'ընդգիմանան բարենորոգումներուն, որովհետեւ Սուլթանը մասնաւոր առանձնաշնորհումներ ու բարենորոգումներ տուաւ իրենց բազմաքին համաձայն. բայց դիւանագիպական մարմինը միշտ յոռետես է:

— Էօմէր Ռիւշի բաշան ու Քուկուպի կուսակալ Շաքիր բաշան՝ ալբանական նաւազ իլլաւազ կեցրոնը Փրիզընտ տեղափոխուեցան, անկից բանակցելու համար Տիագրոյ և Իրէք հիւս. գաւառներուն ու Լիւմա հարաւ. գաւառի ալբանացիներուն հետ:

— Չերպիւնայ սպաննիչ Իպրահիմ զօրքին համար Կ. Պոլիս ու Բեթրպուրի բանակցութեան մէջ են. Իպրահիմ մահուան պիտի զատապարտուի, իսկ Սուլթանը, ալբանացիներուն վախէն կուզէ որ Զարը շնորհէ Չերպիւնայի սպաննիչին կեանքը:

— Պուլխարիոյ նախարարապետը պ. Տանէֆ, Բեթրպուրի ու Վիեննա բողոքներ զրկած է թուրքերուն ձեռքով բերուած բարենորոգումներուն զանգաղութեանը դէմ, մինչդեռ Պուլխարները կը բռնեն հանգարտ մնալու իրենց խօստումը: Շատ գէշ կը մեկնուի իշխանին օտար հողի մը վրայ այսքան երկար աստն մնալը, ներկայ պարագաներու մէջ:

— Ռուսական կառավարութիւնը Չերպիւնայի յաջող պ. Մաշքօֆի լուր զրկեց որ պուլխար բանակէն Միսթանիէֆ, տեղակալը, ուրիշ եօթը մարգերու հետ մա-

կեղոնական սահմանազրուին անցած է Մաչ-
քոֆ ու իր ընկերներն սպաննելու դիտումով:
Մաչքոֆ, իր կառավարութեան հրահանգ-
ներուն համաձայն, Սերպերուն կողմը կը
բռնէ միշտ ու ասոր համար իր զէմ կը
զբոսէ Պուլիարներն ու Ալբանացիները: Ամ-
նամեծ լտանգներու ենթարկուած է ինք:

Միթրոսիձա տեսակ մը բռնակեղ գարձած
է. ուստի հիւպատոսը կը պաշտպանուի ընտ-
րեալ կատաղի զօրքերէ. բայց ինք չը կրնար
մահէ խուսափիլ, և սակայն ուստի կառավա-
րութիւնը պարձեալ կը յամառի հոն պա-
հել իր հիւպատոսը:

— Սօժիւայի երկու հեծելագուններ զրկուե-
ցան զէպ ի ֆէտթէնտիլ, իբր թէ սահմա-
նազրուիք հսկելու համար: Կը կարծուի թէ
կարեւոր ուժ մը կեղոնացած է այս կողմը,
զէմ գնելու համար թրքական արշաւանքի
մը պատահականութեան: Պատերազմական
նախարարութիւնը զէնքի կանչեց երկու նոր
կարգեր, փութկոտութեամբ առաջ կը տա-
րուին սլաւոնաստութիւնները, պատերազմին
համար:

Ճողովուրդին մէջ օր օրի կ'աճի խան-
դավառութիւնը պատերազմի համար: Խում-
բեր կ'անցնին զրօշակներով: Մակեդոնիոյ
ազատագրութեան ի նպաստ միթիսիներ
տեղի ունեցան Սօֆիա, Ֆիլիպէ և արիշ-
քազաքներ. կը սարակոսինք թէ պուլիար
կառավարութիւնը կարենայ կեցնել այս մար-
տաշունչ շարժումը:

Պատերազմական նախարարութիւնը զեռ
կը շարունակէ զօրքեր զրկել սահմանա-
պետները, որ արդէն եօթանասուն հաւար
մարդ շարժման մէջ են:

Չրոյց կայ թէ պուլիարներուն ու թոբը
գնդերուն միջեւ տեղի ունեցած է արշէն
ընդհարում մը Ռիւոյի մօտերը:

— Կ. Պօլիս, Մայիտի վեցին կացութեան
մասին ընդհանուր մտահոգութիւն կը տիրէ.
պատերազմի շուկներ կը շրջին: Մայրա-
քաղաքին մէջ յուզումն ու խուճապը մեծ են,
որովհետեւ գօմիթէները հոն ալ գործունէու-
թեան մէջ են:

— Ապս իւր Հաւիս կը գրէ Ռափէլ թեր-
թը, որոշում մը տուած է իր արքայական
տան աւանդութեանց բոլորովին հակառակ.
Միտք ունի իր կրտսեր որդին Ահմէտ Էտ-
աին էֆէնտին Երուպա զրկել. իշխանը պի-
տի մեկնի սեպտեմբերին, առաջին անգամ

պիտի այցելէ Պերլինի արքունիքը, յետոյ
Բեթրպուրի, և իր պարսականութիւնները
ճարին մատուցանել ետքը, պիտի դառ-
նայ Վիեննա, յետոյ պիտի այցելէ Հոլմ,
Բարիզ ու Լոնտրա:

— Դուռը տէրութեանց ուղղած իր նոր
շրջաբերականով, Սելանիկի վերջին զէպը-
րուն ամբողջ պատասխանատուութիւնը կը
նետէ Պուլիարիոյ վրայ:

— Վերջնագիր մը կը պատրաստէ
Դուռը պուլիարիոյ իշխանացեալութեան զէմ,
զանազան կողմերէ իրեն արուած խրատնե-
րուն համաձայն. Դուռը միտքը զրած է
ազգու զիրք մը բռնել Պուլիարիոյ զէմ:

— Մարսալաւեր. Հիմայ Սելանիկի
առջեւ կը գտնուին երեք աւստրիական և
ուր իտալական մարտանաւեր:

— Սելանիկի մէջ հանրային հաստա-
տութիւնները զեռ փակ են, Պուլիարները
չ'են համարձակիր դուրս ելլել:

Պատերազմը կամաց կամաց անխուս-
փելի կը դառնայ Թուրքիոյ ու Պուլիարիոյ
միջեւ:

— Թուրքիէն մայիս եօթը թիւով հեռագիր
մը կը ծանուցանէ թէ հրաման տրուած է
նաւարածին մը ճամբայ հանել զէպ ի Սե-
լանիկ:

— Պուլիար կառավարութիւնը խնդրած է
Բ. Դանէն ետ առնել մայիս վեցին հազօր-
դուած բողոքագիրը, որ պաշտօնապէս ներ-
կայուած չէ արդէն և որուն ոճը խիստ
նախատական նկատուած է:

— Ուաշինկիթիկ Մայիս ինը Հէյ՝ նա-
խագահ Բուզլէթէ խնդրեց ճարտին ու
Անգլիային հետ միասին գործել Նիու Շան-
կի մէջ ուստական յարձակման զէմ:

— Անգլիա ուր մայիս, Բէքինէ Ռիւ-
թէրի կը հեռագրուի թէ Ռուսերը ստուար
ուժերով զբաւեցին Նիու Շուանկը, նաեւ
Լիասի գետաբերանին բերդերը, որ պա-
տերազմական պատրաստութիւններ կ'ընեն:

— Փեֆիկ, ուր մայիս. Ռուսերը Նիու
Շուանկ վերադարձուցին մեծ թուով քնդեր,
որոնք վերջերս ետ քաշուած էին Փօր Ար-
թիւրի ու երկաթուղիին զանազան կէտերուն
վրայ: Խոշոր թնգանօթներ ալ զրկեցին հոն
ու ստուար գօրաբաժնի մը հրաման առին
որ նորէն զբաւէ Թիւն Շուանկ թէ բա-
ղաքը: Տասնչորս հազար զօրքեր փօր Ար-
թիւրի ու Լիաս գետին միջեւ տարօրոյն կը

շինեն հիմայ Մանչուրիոյ մէջ պատահելիք գործողութեանց վեմ գնելու համար:

Փեքին, ինը մայիս. Ռուսիոյ այս վերջին արարքը պարզապէս յայտարարութիւն մըն է թէ ինք պատերազմելու պատրաստ է Մանչուրիան պահելու համար: Արդէն ասանէ մի վեր լուր կ'առնուէր թէ Ռուսիան հոն ահագին ռազմամթերք ու պաշար կը հաւաքէր:

Ռուսիոյ այս շարժումը երոզուցիլ պիտանայիտական ակումբներուն մէջ մեծ յուզում պատճառեց:

Լոնտրա, ութը մայիս. Սթանտարս Պրեսսել կ'իմանայ թէ Անգլիոյ բռնած վերջին ու Օսմանեան կայսրութեան ոչ նպաստաւոր կացութեան հետևանքով, Պաղատախերկաթուղին ծրագրիք հիմակահիմալ եսթադուեցաւ:

Սելաևիկ, Այս չորեքշաբթի օրուան խոսնակութեանց մէջ ասանբնակ հոգի ըստ պաննաեցան և տասնը ինը վերաւորուեցան:

Մակեդոնական վերջին գեպերուն, Յունաստանի լրագիրները բուն յօդուածներ կը հրատարակեն, պուրիարական կառավարութեան բռնած թող ընթացքին դէմ:

Չարք Սուլթանին աղերսական դիմումին վեալ հաճեցան շնորհել կեանքը ալբանացի իպրահիմ զօրքին, որ, ինչպէս դիտեն ընթերցողները. Միթրովիցայի ուսական հիւպատոս Չերպինան սպաննած էր վերջերս:

Յարին այս ներդաւախ վերքը, բաղաբական աշխարհի մէջ շատ մը մեկնութիւններու գոռ կը բանայ: Ոմանք այս շնորհը կը նկատեն նոր ու փայլուն ապացոյց մը Յարին խաղաղասիրական նպատակին:

ՅՍ.ՋՈՐԴ ԹԻԻՈՎ

Պիտի հրատարակենք Այնթապէ շահեկան թղթակցութիւն մը: Այս թղթակցութիւնը յատուկ գաղափար մը կ'ուսայ կիլիկիոյ այդ կարեւոր քաղքին նոր բնակչութեանը ներկայ վիճակին վրայ:

ՆՈՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գող Մժղօ. Վասպուրականի կեանքից, հեղինակ Նշեկ Լիւէց: Ժամանակակից, այսօրինքն կէս դարէ առաջ Հայաստանի կողմերը տեղի ունեցած զէպքեր, վիպականօրէն նկարագրուած. ամբողջութեամբ յանձնարարելի է, չը նայելով զբահանութեան կանոններուն դէմ ինչ ինչ մեզանչուեցերուն, որոնք զգալիօրէն աչքի կը զարնեն յիշեալ գիրքին մէջ, որ վեպ մը չէ, թէ՛ կազմութեամբ թէ՛ ձեւովը, այլ պարզապէս պատմութիւն մը:

Կը վաճառուի ֆիլանիկի տպարանը,

հոտը երկու ֆրանգի

Հասոյթը յատկացուած է հայրենիքի որբերուն

ՃՈՒՐՆՈՂՈՒԹԵԱՆ ՏՊԱՐԱՐԱՔԻՆՆԵՐ

Է Զուիցերիա

ՆՇԱՆ ԿՈՐԿՈՏԵԱՆ

Ստացած ու կարգացած ենք այս գրքոյկը, որ կը պարունակէ փետր. 22ին Գահիրէի Լոսրան-Տնթերցատան մէջ արտասանուած բանախօսութիւն մը:

Զուիցերիոյ տեղագրութեան հեապ. բանախօսը յաջողած է ճարտարօրէն պատկերացնել արեւմտեան դրախտին կենսատու կլիման, դիւթական տեսարանները, վարչական առաւելութիւնները, են: Ամեն Հայութիւնը տանուելու արժանի գրքոյկ մը:

Դիւնն է երեք զրշ. սղջ. Դիմել խմբագրատունը.

ԲԱՅՈՒԱՅ Է ԲԱԺԱՆՈՐԻԱԳՐՈՒԹԻՒՆ

ՓԻՒՆԻԿ

ԱՄՆՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻՆ

Որ կ'սկսի այս տարուան Յուլիան հրատարակուիլ Աղեքանդրիա, նոյն ուղղութեամբ և հարուստ պարունակութեամբ:

Ամենօրեայ Փիւնիկի խմբագիր-Տնօրէն է ՍՄԲԱՏ ԲԻԴՐԱՏ, որուն պիտի աշխատակցին երկու օգնական-խմբագիրներ ու մէկ աւելի թղթակիցներ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Ամենօրեայ Փիւնիկը, ըլլալով ժողովրդային հրատարակութիւն մը, և նպատակ ունենալով քաջալիրել յառաջդիմակերիտասարդութեան շարժումները, առ այժմ ասոնց համար մասնաւոր սիւնակ մը կը յատկացնէ, ուր պիտի կրճան երեւիլ մանաւանդ նորահաս գրողներու յօդուածներ, հոգ չէ թէ առանց կոչումով ու պաշտօնով խմբագիրներ յորովայնէ ընտրեալ չ'ըլլան, և կամ ուղղագրութեան դէտ ալ մեղանշեն: Խըմբագրութիւնը, իրեն վերապահելով ո՛ր և է գրութիւն կոկելու իրաւունքը, յօժարակամ պիտի հրատարակէ յօդուածներ, թղթակցութիւններ, բաւական է որ հանրութեան օգտաբեր, ժողովուրդը լուսաւորող գաղափարներ բերեն անոնք:

Ամենօրեայ Փիւնիկը, ըլլալով անասի ու միանգամայն ազատական թերթ մը, պիտի ջանայ մնալ միեւնոյն բարձրութեանը վրայ, շարունակելով անաչափորէն հնազանդ հանրային գործերն ու խայտառակել գեղձուծները, առանց խնայելու այս կամ այն կուսակցութեան, ազգ. լիաութեան, ևն.:

ԾՐԱԳԻՐ

1.— Կը պատուակէ ամեն օրուան հետագիրները, բազաբախտ, ազգային, սեզական, առեւտրական, ևն. ևն առատ ու թարմ լուրեր:

2.— Անպակաս կ'ունենայ առաջնորդող յօդուած մը, ազգային թէ քաղաքական, գրական թէ դիտական նիւթի վրայ:

3 ԹԵՐԹՈՒՆը պիտի յատկացուի բանասիրականին, որուն մէջ պիտի երեւին:

Մ.— Չեթունակաւեֆ. ամբողջ, այն է ինը հարիւր տարուան պատմութեան մեծ անցքերը, ցեղախումբերոն հետ լինացին:

րուն ընդհարումները, հերոսական արշաւանքները, պատերազմները, ևն, ևն, ամբողջը վկայի ձեռով:

Բ. Չեթունի սովորոյթները. բարբերք, գաւառաբարբառը, աւանդութիւնները, լեռնական կեանքը, ևն:

Գ. Հայկ. Հարցին վրայ սկիզբէն մինչև մեր օրերը լոյս տեսած թեր ու դէս հրատարակութեանց— բնականաբար դիտանագէտներու. ընկերաբաններու, ճամբորդներու հեղինակութիւններ— նաեւ այս վերջին քառորդ տարու շրջանում, Երոպայի զանազան կեդրոնները սարքուած հաւաքոյթներու մէջ շուտած բանախօսութեանց թարգմանութիւնները, Կլասսիցիստի ճատերէն ընկրեալ մինչև Տիգրան Երկաթիները:

Դ. ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ կենսագրութիւնը, մենչև որ աւարտի:

ԵԳԻՊՏԱՀԱՅԲ

Եգիպտահայ մեծ մարդերուն կենսագրութիւնը:

Ե. Գիտութեան աշխարհին մէջ երեւցած ամեն նորութիւն, գիտ, բեւեռախոյզ ու երկրախոյզ գիտաններուն ծանօթագրութիւնները ևն:

Ամենօրեայ Փիւնիկին Չորրորդ Էջը պիտի գրան ծանուցումներ, յայտաբարութիւններ, հայ թէ օտար վաճառատանց, արհեստաւորներու, շոգենաւային, երկաթուղեաց ընկերութեանց ծամանակացոյց ու սակագին, պարգեւաւոր վիճակահանութեանց ցուցակը, սակարանին ելեկները, ևն. ևն:

ՊԱՅՄԱՆՔ

Բաժանորդագրութիւնը կը սկսի ամեն ամսոյ սկիզբէն և կ'էսէն:

Չեթը կը ծախուի հատը հինգ միլլիմի. Հասցէն է

Տպարան Փիւնիկ խմբագրութեան ամենօրեայ թերթի, Աղեքանդրիա:

Չեթունի քարտախրացը, հաստատուած Աղեքանդրիա, 1903 Մարտ 1ին, Ամենօրեայ Փիւնիկ իւրաքանչիւր բաժանորդէ իրաւունք պիտի ունենայ ստանալ տարեկան քսան զըշ, ողջ, 5 Ֆրանգ, 2 ուրբի, կամ 1 յոտար, համաձայն խմբագրութեանս փափագին ու կարգագրութեան:

Հետևաբար, կարևոր է այժմէն յայտա-
բարել թէ՛ Պատ. բաժանորդները, սրոնք
պիտի ուզեն այսօրուրնէ կանխիկ վճարել
թերթին եռամսեան, վեցամսեան կամ տա-
րեկանը, հաճին Բարենիւրացի տարեկան
բաժինը զատել և զրկել ուղղակի Աղեքսան-
դրիա Չեթունի Բարեսիրաց Ընկ. Նախա-
գահ Գ.Եր. Հայր Բարթողիմէոս Վ. Թա-
գաճեանի:

**ՓԻՆՆԻԿը ձեռքէ կը ծախուի
հատը ԲՍԱՆ փառայի
ԱՂԵՔՍԱՆԱՊՐԻՍ**

Տիար Բարոնդ Թէլլալեան, լրագրավաճառ,
ի Շէրիֆ բաշա:

- » Ռուբէն Ճիզմէճեան, փերեզպի, և
կեզեցիին զիմաց:
- » Յարութիւն Լազիկեան, Նոր Դար
կաթնարան:

ԳԱԼՅՐԵ

Տիար Կիրակոս Զուլպեան, Լտարան. Ըն.
Թերցարան:

ՏԻԱՐ ԳԱՍՊԱՐ ԺԱՄԱԿՈՉԵԱՆ

Չեթունի Բարեսիրաց Ընկերութեան հա-
ւարել, պաշտօն ունի նաեւ զանձումներ ը-
նելու Փիլոսոփ բաժանորդներէն, որոնք հի-
մակուրնէ կը հաճին վճարել եռամսեայ,
վեցամսեայ կամ քարեկան բաժնեգինը
Ամեկօրեայ Փիլոսոփի, որուն բաժանորդ-
ագրութիւնը բացուած է այսօրուրնէ:

Թուականն սկսեալ, երեք ամուսան մէջ,
այոինքն մինչև Յուլիսի վերջը, կանխիկ
վճարող բաժանորդներուն համար մասնաւոր
զեղջ ըրած ենք, հետևեալ կերպով:

	ՆՈՒԱՄՍ • ՎԵՑԱՄՍ • ՏԱՐԵԿ •			
Եղիպտոս զրջ	25	50	100	
Երոպա ֆր.	8	16	32	
Ամերիկա տոլար	1 50	3 50	7	
Կովկաս ուրբի	3 50	7	14	

Չորս ամիսը լրանալէն. ետքը բաժանոր-
ագրութիւնները պարտաւոր են վճարելու 4ե-
տեւեալ կերպով:

	ՆՈՒԱՄՍ • ՎԵՑԱՄՍ • ՏԱՐԵԿ •		
Եղիպտոս զրջ.	30	60	120
Արտասահման ֆր.	10	20	40
Ամերիկա տոլար	2	4	8
Կովկաս ուրբի	4	8	16

ՀԱՄԲԱՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՅՆՈՒՍԱԿԱՆ ԴԵՐՉԱԿ

Աքրարիկի մզկէթին դիմաց Մեծ Մկրտչոյ խանութը
կը գործածէ տվորարար՝ անդիկական ու ֆրանսական տոկոս
ու ազնիւ կերպաններն, չափաւոր գներով, զոչացնելով մին-
չև իսկ ամենէն նրբաճաշակ յաճախորդներէ ու յարգելով ի-
րենց աննափոքր դիտողութիւնները: Կը գաարաստէ, ի պա-
հանջել հարկին, 24 ժամուան մէջ, ամբողջ գրասեղ մը:
Հարկը դրուի առևտուրի փոխարէն յաճախորդը կատանայ
հարկը հառ վաճառականական գրոյմախաղթ, որ հոս կը ծա-
խուի: Քիսեցեք Մեծ Մկրտչոյ խանութը:

Փրանոերէնի, տաճկերէնի եւ տօ-
մարակալութեան հմուտ երիտասարդ
մը պատրաստ է պաշտօնավարել վա-
ճառատան մէջ: Իրտասահման ալ
կ'երթայ գոհացուցիչ պայմաններով.
զիմել խմբադրատունը:

Անգլիերէնի մասնաւոր դասեր աւանդողը
—որուն ծանուցումը ժամանակէ մ'ի վեր կը
հրատարակուի փիւնիկի մէջ— կը շարունակէ
իր գասախօսութիւնները Պէդրիճի մէթոտով.
Հիմայ սենի բաւական թիւով աշակերտեր.
կը խոստանայ շաբաթը չորս անգամ գաս
առնողին սովորեցնել հինգ—վեց ամսուան
մէջ գրել, կարգալ սե խօսիլ:

Մանրամասնութեանց ու պայմաններուն
ամար գիմել փիւնիկի խմբագրութեան:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՎԱԶԳԷՆ—ԵՐԳՈՐԱՆ

Մեծ գեղշով պիտի ծախուի վեց հարիւր
թեճագիր երեսներէ բաղկացած սոյն բնագր-
ձակ երգարանը, իր մէջ կը պարունակէ
բոլոր հին ու նոր երգերը և տասնի չափ
պշտաւոր բանաստեղծներու պատկերներ և
կենդանագրականներ: Գինն է, ճամբու ծախ-
քով միասին, տողար մէկ չէնդ տասնևհինգ,
Երոտպայի համար հինգ ֆր. Պարսկաստանի
համար չորս ֆր.

Տ. Փանոս Մալբիկեան. Աղեքսանդրիա.

Ռաթիլ փաշա փողոց:

Տ. Գ. Կազանչեան, Գահիրէ. Ապտին:

ԼԱՅ ԾՆՈՂԱՔՆԵՐՈՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՈՅԻԿ ԿՐԹԱՏՈՒՆ

Լոզան, Զուլցերիա

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Արեւելեան կամ հայկական կրթատունը
կ'ընդունի 10էն 20 տարեկան աշակերտներ,
որոնց կուտայ, ծնողներու բաղձանքին հա-
մեմատ, գիտական, գրական, առևտրական
կամ արհեստագիտական առողջ ու հիմնաւոր
կրթութիւն մը, ներդաշնակօրէն միացած
ազգային հիմնական գաստիարակութեան մը
հետ: Մեր հայ աշակերտներուն կ'աւան-
գենք, և այս առանց ու եւ է վճարումի՝
հայերէն լեզու, հայ. պատմութիւն, հայ.
մատենագրութեան պատմութիւն, ևն:

Արեւելեան կրթատան տարեթոշակը,
հակառակ իր ընծայած բազմաթիւ իրակաւն
առաւելութիւններուն, անմրցելի կերպով չա-
փաւոր է:

Հայ ծնողներու համար մասնաւոր
պայմաններ: Ընտանեկան կեանք:

Կրթատանոյ յայտագիրն ամեն ուզողի
կը ղրկուի:

ՏՆՕՐԷՆ Մ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

()

Տըքթ. ի Գիտութիւնս

Համալսարանական մասնաւոր Ռուսցիչ



Եկիմ Վոլոտուան

Նամակատուի թիւ 398

ԺԱՄԱՑՈՑՑՑՆԵՐ. ԳՈՋԱՐՆԵՐ. ԱԴԱՄԱՆՎՆԵՐ. ԱԿՆՈՑՆԵՐ.

L. KRAMER & Co

Հայրապետի Ն. Խ. Բարձրութեան

ՄՈՒՍԿԻ ՓՈՂՈՑ. ԳԱՀԻՐԷ. ԵԳԻՊՏՈՍ

ԳՈՐԾԱՏՈՒՆ ԳՈՂԱՐԵՂԻՆԱԳ

Աղեխանդրիս, Տպարան փիւնիկ